

Ա. Ղաճալանյան

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍԸ

Հովսեփ Օրբելու անունը անխզելի կերպով կապված է հայ ժողովրդի հաղարամյակների հնություն ունեցող նյութական ու հոգևոր կուլտուրայի այնպիսի կոթողների հետ, ինչպիսիք են՝ Անին, Աղթամարը, միջնադարյան հայկական առակները և «Սասունցի Դավիթ» էպոսը: Շուրջ կես դար նա եղել է այդ հուշարձանների տաղանդավոր հետազոտողն ու խանդավառ ջատագովը:

Առանձնապես մասսայական ճանաչում ունի Օրբելու կատարած աշխատանքը հայ ժողովրդի ազգային մեծ էպոսի ուսումնասիրման և ժողովրդականացման գործում:

Օրբելին հայկական էպոսին ծանոթանում է ներկա դարի սկզբներին: Տակավին երիտասարդ ուսանող էր նա, երբ Պետերբուրգում լույս տեսնող Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի «Նոթեր»-ի IV գրքում առիթ ունեցավ կարդալու իր ուսուցիչ Նիկողայոս Մառի գրախոսությունը՝ Մանուկ Աբեղյանի հրատարակած «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազնական վեպի Մոկաց մի պատումի մասին: Շատ շանցած, 1911 թ. Օրբելին, Ն. Մառի խորհրդով, հնագիտական, բարբառագիտական ու ազգագրական հետազոտություններ կատարելու նպատակով, Դիտությունների ակադեմիայի կողմից, գործուղվում է Արևմտյան Հայաստան: Մոտ մի տարի մնալով Մոսկուում և Վանում, Օրբելին մոտիկից շփվում է մոկացի գզրարների հետ, ծանոթանում Սասնա ծռերի մասին նրանց պատմած զրույցներին, իսկ Վանի մոտ՝ Մհերի դուռն սեպագրերն ուսումնասիրելիս, ականջալուր է լինում Դավթի որդի Մհերի ավանդավեպին:

Տարիներ հետո անդրադառնալով Դավթի և Մհերի Հայաստանի շատ վայրերում թողած հետքերին, Օրբելին գրել է.

«Մոկս գավառում ինձ ցույց են տվել Բաթմանա կամուրջը, ուր Դավթին ընդհարվում է Մըսրա Մելիքի երկու փահլեանների հետ: Իսկ Վան քաղաքի մոտ, միջնաբերդից շուրս կիլոմետր հեռավորության վրա տեսել եմ Մհերի հրաշակավոր դուռը: Դա իրոք դուռ հիշեցնող մի քանդակ է վիթխարի ժայռի վրա՝ սեպատառ մակագրությամբ: Քարանձավի մուտքի առաջ, ժայռի մեջ մի փոքր փոս կա. դա այն տեղն է, ուր դուռը բացվելուց առաջ անհամբերությունից սմբակով խփել է Քուռկիկ Ջալալին»¹:

Վաղուց և լավ ծանոթ լինելով «Սասունցի Դավթին», վերջինիս ծնունդ ու սնունդ տվող պատմական, տեղագրական ու ազգագրական միջավայրին, Օրբելին, սակայն, հայկական հերոսական էպոսին ընդհուպ մոտենում է միայն 1939 թ. նրա 1000-ամյակի տոնակատարության շրջանում, երբ Հայաստանի կառավարությունը անվանի գիտնականին հանձնարարում է գլխավորելու հորելյանական մի շարք կարևոր միջոցառումներ: Սիրով ու պատրաստակամու-

¹ Հովսեփ Օրբելի. Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 53:

թյամբ ընդունելով այդ հանձնարարությունը, Օրբելին իրեն հատուկ խանդավառությամբ ձեռնամուխ է լինում հարազատ ժողովրդի հնադարյան կուլտուրայի այդ մեծ հանդեսի կազմակերպման ու իրականացման ուղղությամբ իր վրա դրված պատվավոր ու պատասխանատու աշխատանքներին:

Օրբելին կարևոր դեր է կատարում, նախ և առաջ, «Սասունցի Դավթի» համահավաք հյուսվածո տեքստի հայերեն ու ռուսերեն վարիանտների ստեղծման գործում: Նրա անմիջական մասնակցությամբ, մաս առ մաս, քննության առարկա է դառնում հատուկ բրիգադի կողմից պատրաստված վեպի նոր հյուսվածքը և հաստատվում է սրա վերջնական բնագիրը: Օրբելու ցուցումներով ու հսկողությամբ իրականացվում են վեպի ռուսերեն տողացի և պոետական թարգմանությունները: Նրա խմբագրությամբ նրևանում լույս են տեսնում «Սասունցի Դավթի» հայերեն և ռուսերեն հոբելյանական հրատարակությունները: Օրբելու անձնական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լենինգրադում տպագրում է «Սասունցի Դավթի» ռուսերեն տեքստը, որն իրավացիորեն համարվում է վեպի հոբելյանական ամենալավ հրատարակությունը:

Օրբելին ամենահաս Քեռի Թորոսի նման հոբելյանի հարցերով լինում է մերթ Երևանում, մերթ լենինգրադում, Երևանից մեկնում է Մոսկվա, Մոսկվայից նորից վերադառնում Երևան... նախաձեռնում, ղեկավարում, ցուցումներ է տալիս, անձամբ մասնակցում այս կամ այն գործին: Նրա մտահղացմամբ և էքսպոզիցիոն պլանով «Սասունցի Դավթի» էպոխային նվիրված հետաքրքիր ցուցահանդեսներ են կազմակերպվում Երևանի Պետական պատմական թանգարանում և լենինգրադի Պետական էրմիտաժում:

Հոբելյանական ամբողջ տարվա ընթացքում Օրբելին հայ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների ամենալայն շրջանների համար, տարբեր տիպի լսարաններում (ուսանողություն, բանվորներ, գրողներ, զինվորականներ, կոլտնտեսականներ, գիտնականներ...) բազմաթիվ դասախոսություններ ու զեկուցումներ է կարդում «Սասունցի Դավթի» մասին, իրեն հատուկ կենդանի ու գունեղ, ինքնատիպ ու պատկերավոր հռետորական ներշնչուն խոսքով վեր հանում վեպի կուլտուր-պատմական, դադաիարական ու գեղարվեստական մեծ արժանիքները, ընդգծում նրա մեջ մարմնավորված՝ ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական և հումանիստական մտքերը: Հիշենք դրանցից՝ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հոբելյանական սեսիայում նրա կարդացած զեկուցումը՝ «Սասունցի Դավթի հայկական մեծ էպոսը» վերնագրով (Երևան): Հիշենք հայկական էպոսի հազարամյակին նվիրված ՍՍՌՄ Գրողների Միության 7-րդ պլենումում նրա կարդացած զեկուցումը՝ «Սասունցի Դավթը և համաշխարհային էպոսները» թեմայով (Երևան): Հիշենք նրա զեկուցումներն ու դասախոսությունները Միութենական Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հատուկ նիստում (Մոսկվա), ՍՍՌՄ Գրողների Միությունում (Մոսկվա), լենինգրադի հոբելյանական կոմիտեի նիստում (լենինգրադ) և շատ ուրիշ զեկուցումներ ու դասախոսություններ:

Նույն ժամանակամիջոցում Օրբելին Սովետական Միության տարբեր վայրերում լույս տեսնող թերթերի ու ամսագրերի համար գրում է բազմաթիվ մեծ ու փոքր հոդվածներ: «Սասունցի Դավթի», «Հայ ժողովրդի մեծ էպոսը», «Հե-

րոսական էպոսը», «Մասունցի Դավթի ժողովրդայնությունը» և այլ վերնագրերի տակ դրանք տպագրվել են՝ «Известия»-ում, «Ленинградская правда»-ում, «Днепровская правда»-ում, «Орловская правда»-ում, «Ворошиловградская правда»-ում, «Омская правда»-ում, «Батумский рабочий»-ում, «Чусовский рабочий»-ում, «Брянский рабочий»-ում, «Челябинский рабочий»-ում, «Советская Белоруссия»-ում, «Красная Татария»-ում, Արշանսկի «Ленинский призыв»-ում, Ջլատոուստի «Пролетарская мысль»-ում, Չերնիդովի «Большевик»-ում, Կեմերովոյի «Кузбас»-ում, Իվանովոյի «Рабочий край»-ում, Երևանի «Коммунист»-ում, «Սովետական Հայաստան»-ում, «Գրական թերթ»-ում, «Սովետական գրականություն»-ում և այլն:


Հատուկ ու առանձին պիտք է հիշատակվեն «Մասունցի Դավթի» հյուսվածո համահավաք խմբագրության հայերեն ու ռուսերեն հրատարակությունների համար Օրբելու գրած ընդարձակ առաջաբանները, մասնավորապես Լենին-գրադի ակադեմիական հոյակապ հրատարակության մեծ առաջաբանը, որը ինքնին հետաքրքիր ու խորը մի հետազոտություն է և առաջնակարգ տեղ կարող է գրավել անվանի գիտնականի հայագիտական լավագույն գործերի շարքում:

«Մասունցի Դավթին» նվիրված իր հետազոտությունների մեջ Օրբելին առաջ է քաշել և նոր մեկնաբանություն է տվել հայկական էպոսի հետ կապված կտրված հարցերի: Ստեղծագործող գիտնականի իր արժեքնի հայացքով նա թափանցել է վեպի էության մեջ, բացահայտել նրա բովանդակության ու արվեստի առանձնահատկությունները:

Խոսելով «Մասունցի Դավթի» սյուժետային գծի զարգացման, նրա կերպարների, լեզվի ու ոճի մասին, Օրբելին կատարում է ճշմարտացի ու խորը ընդհանրացումներ: Նա գրում է.

«Էպոսի հիմնական սյուժեի զարգացումը բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, որոնք մարդկային հասարակության պատմության արշալույսին սկսեցին ընդունել կենդանական կամ մարդկային ձևեր: Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը ավելի ու ավելի է մոտենում երկրին, ավելի ու ավելի է մոտենում երկրավոր մարդու կերպարանքին:

Էպոսի հերոսները, ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի, որ հնագույն մարդն անհամեմատ ավելի սուր էր զգում, քան այն մարդը, որն արդեն վարժվել էր իրեն ենթարկել այդ ուժերի թեկուզ մի մասը—խորապես մարդկային են: Սրանք կենդանի մարդիկ են՝ օժտված արիությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ: Նրանց երկրային կյանքը պատկերող զրույցներում վառ արտացոլում են գտել ոչ միայն նրանց սխրագործությունները, այլև մարդկային զգացմունքները: Էպոսի հերոսները սխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում ժողովրդի բարօրությունը, և որովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու ուժ են զգում. այդ սխրանքները նրանց ոչ մի առավելություն չեն տալիս. հերոսները չեն խզում իրենց կապը ժողովրդի հետ: Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անաղարտությունը, պարզասրտությունը, օգնության ամեն մի կանչի անհամադարձագանքելու հատկությունը:



Չնայած էպոսի լեզվի սեղմությանը, բառերի անսովոր ժլատությանը, ոճի մոնումենտալությանը, մանրամասնություններ նկարագրելուց խուսափելու ձգտումին, «Սասունցի Դավթի» էջերից իբրև կենդանի մարդիկ հառնում են հերոսների կերպարները՝ տղամարդ թե կին, որոնք այնքան տարբեր լինելով իրարից բնավորությամբ, միևնույն ժամանակ ունեն ինչ որ ընդհանուր բան»¹:

Բերված համեմատաբար փոքր այս հատվածի մեջ մի մեծ հատորի մտքեր կան դրված: Այստեղ զարմանալի խտությամբ ու խորությամբ բնութագրված են ոչ միայն էպոսի սյուժեի զարգացումը, կերպարները, լեզուն ու ոճը, այլև անուղղակի կերպով բացահայտված է ստեղծագործական այն մեթոդը, որով հորինված է «Սասունցի Դավթի»-ը. դա ժողովրդական բանահյուսության մեջ և մասնավորապես ժողովրդական վեպում ցայտուն գծերով դրսևորված, այսպես կոչված, նայիվ կամ նախակերտ ունիվերսալ է, որի սպեցիֆիկ առանձնահատկություններն են՝ կենսական ճշմարտության յուրօրինակ զուգորդումն ու միահյուսումը ֆանտաստիկայի ու հիպերբոլայի հետ, ֆանտաստիկա և հիպերբոլա, որոնց արմատները թաղված են բնության երևույթների ու հասարակական ձևերի՝ հեռավոր դարերի խորքից եկող դիցաբանական պատկերացումների մեջ:

Հայկական էպոսի ուսումնասիրության հետ կապված մյուս կարևոր հարցը, որ զբաղեցրել է Որբելուն, դա «Սասունցի Դավթի» պատմական միջուկի ու ձևավորման հարցն է: Գիտնականը իրավամբ մերժում է՝ էպոսի բովանդակությունը և առանձին մանրամասները իբրև Հայաստանի քաղաքական պատմության գեղարվեստական, փոքր ինչ գունազարդված շարադրանքը համարելու և մանավանդ նրա մեջ վերարտադրված դեպքերն ու վեպի հերոսներին՝ համապատասխան պատմական դեպքերի ու դեմքերի հետ պարզունակ ձևով նույնացնելու փորձերը: Նա միանգամայն ճիշտ կերպով «Սասունցի Դավթի» համարում է հայ ժողովրդի իր անկախության և ազատության համար մղած դարավոր հերոսական պայքարի հանճարեղ գեղարվեստական ընդհանրացումը: Հեղինակը նշում է, որ «Սասունցի Դավթի» միջուկը կամ առանցքը հանդիսացել է 9-րդ դարում սասունցի գյուղացիների հայտնի ապստամբությունը արաբ հարկահանների դեմ, խոթեցի Հովնանի գլխավորությամբ, որի մասին հիշատակում է Թովմա Արծրունին: Այդ միջուկի վրա է ձևավորվել, ըստ Որբելու, հայկական հերոսական մեծ էպոսը, իր շուրջը համախմբելով հազարամյակներ դրանից առաջ ծագած առանձին առասպելներ, ավանդություններ ու դրույցներ, ճիշտ այնպես, ինչպես խեցու վրա գոյացած աննշան ավաղահատիկի շափով կրային Լուստի շուրջը դարսվում են աղերի ազդեցության տակ գոյացած նրստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտը...

«Էպոսի առանցքը, — գրում է Որբելին, — անկասկած, կազմել է սասունցիների՝ արաբ նվաճողների դեմ դուրս գալու և նրանց ջախջախելու իրադարձությունը: Այլ հարց է, որ Թովմա Արծրունու հիշատակած Սասնա ապստամբությունը փոքր տեղամաս է ընդգրկում, որ այդ ապստամբությանը միայն երկու հարյուր հոգի են մասնակցել, որ Երկրից արտաքսվել է ոչ թե արաբական խալիֆը, այլ շարքային մի հարկահան: Ժողովրդի հիշողության մեջ պատմական կոնկրետ փաստին ավելացել են դանազան հարակից դրույցներ, և դրանց մեջ գերմարդկային հատկություններ են վերագրվել շարքային, սովորական մի

¹ Հովսեփ Որբելի. Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 11—13:

մարդու, որը, սակայն, հերոս է. իր կյանքն է նվիրաբերել հայրենիքին, համախմբել իրոք թույլ, իրոք անօգնական, վատ զինված լեռնցիների ուժերը, նրանց հանել այն ժամանակվա իմաստով հիանալի զինված արաբական զորախմբերի դեմ: Նույն հերոսին են վերագրել այն բոլոր հատկանիշները, բնավորության այն բոլոր գծերը, որ այդ ժամանակ ունեցել է երգեր հյուսող, եղելություններ վիպող ամբողջ ժողովուրդը: Ժողովրդին հատուկ այս գծերի հանրագումարից էլ հենց ստեղծվում է հերոսի կերպարը, հերոս, որ գերազանցում է արդեն մարդկային չափանիշները, դառնում է հսկա, ընդունակ յուրացնելու մարդկային առօրյա կյանքի սահմաններից բացահայտորեն դուրս եկող հատկանիշներ»¹:

Ուշագրավ են Օրբելու արտահայտած մտքերը «Սասունցի Դավիթի» ժողովրդայնության մասին: Վճռական կերպով հակադրվելով էպոսի ազնվականական ծաղման տեսության կողմնակիցներին, նա բաղմաթիվ խոստովանատարկներով հավաստում է մեր վեպի իսկական ժողովրդական ստեղծագործություն լինելը: Այդ փաստարկները համառոտ կերպով կարելի է ամփոփել հետևյալ հիմնական կետերի մեջ.

1. «Սասունցի Դավիթը» բանավոր ձևով ապրում է ժողովրդական լայն զանգվածներում, պատմվում է ժողովրդի ծոցից դուրս եկած վիպասանների բերանով, ժողովրդի կենդանի խոսակցական լեզվով:

2. Վեպի հերոսները օժտված են ժողովրդական զանգվածներին հատուկ արդարամտությամբ և մեծահոգությամբ: Նրանցից ոչ մեկը, նվազագույն չափով անգամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ձգտում հատուկ իրավունքներ ձեռք բերել իր շրջապատում, չի ցուցաբերում փառասիրության ոչ մի նշույլ:

3. «Սասունցի Դավիթ» հերոսները, ըստ ամենայնի, բացասական վերաբերմունք ունեն իշխանության նկատմամբ. նրանցից ոչ մեկը գահ չի բարձրանում և ոչ էլ իշխանական զղյակի տիրակալ դառնում: Դավիթը և մյուսները սեփական կամքով հրաժարվում են գահից, երբ նույնիսկ այդպիսի առիթ է ներկայանում իրենց:

4. Ի տարբերություն ասուրեական ռոմանների հերոսների՝ Սասնա ծռերը իրենց ձեռքում կարողանում են ամուր բռնել թե սուրը և թե մուրճն ու գութանի մաճը:

Բերելով այսպիսի և նմանօրինակ ուրիշ փաստարկներ, Օրբելին իրավացիորեն դալիս է այն եզրակացության, որ «Սասունցի Դավիթը» չէր կարող ստեղծված լինել ազնվականների զղյակներում, և որ նրա իսկական օրրանը եղել են գեղջիկական խրճիթները: Նա գրում է. «Եթե արաբների տիրապետության դեմ ուղղված պայքարը, օտարերկրյա դավթիչների արտաքսումը պատկերող էպոսը չստեղծվեր ամրապնդված ֆեոդալիզմի դարաշրջանում, ֆեոդալական հասարակության ներքնախավերում, ֆեոդալական Հայաստանի ժողովրդական զանգվածներում, ապա հերոսական գործեր դրսևորող զրույցները այս կամ այն կերպ կարտացոլեին հայ պատմիչների գործերում, որոնց թիվը փոքր չէր ոչ 10-րդ դարում, ոչ էլ հետագայում: Սակայն ֆեոդալական ազնվականությունից սերած հայ պատմիչները անտեսել են էպոսն այնպես, ինչպես այն չէր ուզում ճանաչել նաև հայ բուրժուազիան, որը 19-րդ դարի վերջերին և

¹ Հովսեփ Օրբելի. Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 74—75:

20-րդ դարի սկզբում ...արհամարհանքով էր վերաբերվում այն առաջավոր անձանց աշխատանքին, ովքեր բանահյուսական նյութերի գրանցումով մոռացումից փրկեցին հայ ժողովրդի մեծ էպոսը»¹ և պալա. «Միայն ճնշումից և հարկահանությունից հոգնած մարդիկ կարող էին ստեղծել Սասուն քաղաքի հիմնադրման հիասքանչ զրույցը, քաղաք, որտեղ Սանասարն ու Բաղդասարը ժողովրդից հարկեր չեն առնում, մարդկանց չեն շահագործում: Միայն իրենց՝ արյունակից հայ թագավորներից ու իշխաններից ձանձրացած մարդիկ կարող էին ստեղծել այն զրույցը, որտեղ Փոքր Մհերն ընդհարվում է ժողովրդին կողոպտող քյոխվայի հետ, որտեղ Ոստանա իշխանը որոգայթով փորձում է գերի վերցնել Մհերին և Քուռկիկ Ջալալին, փորձ, որը չի հաջողվում հեծյալի ու ձիու դիմադրության շնորհիվ:

«Ազնվազարմների» ուլ և ինչ լինելը փորձելուց հետո միայն ժողովուրդը կարող էր գիտակցել «հասարակ» մարդկանցով նրանց փոխարինելու անհրաժեշտությունը»²:

Ամփոփելով ու ընդհանրացնելով իր դիտողությունները «Սասունցի Դավթի» ժողովրդայնության մասին, Օրբելին ընդգծում է այն մեծ արժեքը, որ ներկայացնում է նա հայ ժողովրդի տարրեր խավերի իդեոլոգիայի զարգացման պատմության համար: «Էպոսն,—ըստ Օրբելու,—ամբողջ ձայնով խոսում է այն խավերի ձգտումների և երազանքների մասին, որոնք հայրենիքի պաշտպանության ու աշխատավոր մարդկանց վիճակի բարելավման համար դարձրել շարունակ սխրագործություններ էին կատարում՝ աշխատանքի ասպարեզում թե ուղիղի դաշտում, առանց ազդարարելու այդ մասին արտաքին աշխարհին, և նրանց այդ լուծությունը նույնքան խորն էր, որքան տիրապետող դասակարգի ներկայացուցիչների լուծությունը ժողովրդական ներքնախափի կատարած արիության ու սխրագործությունների հանդեպ»²:

Նոր և հատկապես արժեքավոր ու հետաքրքիր են Օրբելու մտքերը «Սասունցի Դավթի» մեջ հարուստ արտացոլում գտած հին Հայաստանի կոսմիկական առասպելների և մյուս ժողովուրդների առասպելական հնագույն պատկերացումների մասին:

Հիշելով Վ. Ի. Լենինի հայտնի զրույթը ժողովրդական բանահյուսության նյութերը «սոցիալ-քաղաքական տեսանկյունով ընդհանրացնելու» անհրաժեշտության մասին, «որն այնքան պետքական ու կարևոր է մեր օրերում ժողովրդական հոգեբանության ուսումնասիրության համար» և մեկնակետ ունենալով այդ զրույթը, Օրբելին տվյալ հարցի կապակցությամբ առաջ է քաշում և լուծում է երկու հիմնական ու կարևոր խնդիր:

1. Ինչպես են ծագել այն առասպելական կերպարները, որոնք մարդկային հասարակության զարգացման ընթացքում արտահայտել են նրա պատկերացումները շրջապատող բնության երևույթների մասին, ինչով բացատրել տարբեր ժողովուրդների ստեղծած առասպելների ու առասպելական պատկերացումների նմանությունը:

2. Ինչ չափով կարելի է խոսել այդ զրույցների ու պատկերացումների փոխառյալ լինելու մասին, որքանով են անկախ հիշյալ պատկերացումներն այն

¹ Հովսեփ Օրբելի. Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 86—87, 88—89:

² Նույն տեղում, էջ 136:

ժողովուրդներին, որոնք իրարից հեռու են աշխարհագրական կամ ժամանակային մեծ տարածությամբ:

Օրբելին վճռական կերպով մերժում է մի ժամանակ ամբողջ աշխարհում տիրապետող արևմտաեվրոպական բուրժուական գիտության և նրան հետևող կիսաֆեոդալական-կիսաբուրժուական ռուսական գիտության (որոշ բացառությամբ) տեսակետն այն մասին, որ մարդկային կուլտուրայի, այդ թվում նաև ժողովուրդների բանավոր ստեղծագործության հուշարձանների ստեղծողը իբր թե հիմնականում հանդիսացել են Միջերկրական ծովի ավազանում բնակվող, այսպես կոչված, հնդեվրոպական ժողովուրդները: Գիտնականի կարծիքով կոսմիկական հնագույն կերպարներում չկա ոչ միայն ժողովրդական, այլև ցեղային տնօրեն, քանի որ դրանք ծագել են այն ժամանակ, երբ տակավին չէին ձևավորվել ոչ ժողովուրդները և ոչ էլ ցեղերը: «Քարին, կրակին, մետաղին նման սլայմաններում և տարբեր ժամանակներում տիրապետելը,— գրում է Օրբելին,— զարգացման նույն ուղին է անցել երկրագնդի զանազան մասերում: Մարդու մտածողությունը, որը սլայմանավորվում է նրա տնտեսական կյանքի զարգացմամբ և որն իր զարգացման ընթացքում նույն ուղիով է ընթանում, աշխարհի տարբեր ծայրերում դրսևորվել է համանման ձևերով, համանման կերպարներով, համանման առասպելներով, այդ կերպարների սլայքարն արտացոլող ավանդավեյերով: Եվ հազարավոր սերունդների կողմից բերն-բերան սլատվելով, այդ առասպելները, ավանդությունները, բնության, գազանի և մարդու դեմ մարդու մղած սլայքարի փորձի այս բոլոր կուտակումները հաճախ մեզ են հասնում զարմանալիորեն նման ձևերով»¹:

«Պրիմիտիվ մարդու մտածողության սահմանափակությունը,— ըստ Օրբելու,— որտեղ էլ ապրելիս լինեք այդ մարդը և այն սլատկերացումների սահմանափակությունը, որոնցից նա կարող էր օգտվել բնության ու նրա երևույթներն արտահայտելու համար, բնականաբար հանգեցրել են նրա գիտակցության համար անմատչելի, ահարկու բնության երևույթների նույնանման դրսևորմանը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ սլատկերացումներն ստեղծվել են աշխարհագրականորեն անանցանելի տարածություններով, ժամանակի տեսակետից բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հազարամյակներով իրարից հեռու մարդկանց մտածողության մեջ»²:

Ելնելով վերոհիշյալ ճիշտ մեկնակետից, Օրբելին հետաքրքիր համեմատություններ ու զուգադրություններ է անցկացնում Սանասարի ու Բաղդասարի, հունական Դիոսկուրների, Կասդոր ու Պոլիդեկ փրկարար եղբայրների, Հնդկաստանի Ավշինների և Իրանի Ասիինների, Արմաղանի ու Անդրոմեդեի, սասունցի արտատեր սլառավ կնոջ, Դեմետրեի և գերմանական Երդայի, Դավթի, Աքիլեսի և Զիգֆրիդի, Մհերի, Միթրայի, Պրոմեթևսի և Ամիրանի և բազմաթիվ ուրիշ պիցաբանական-վիպական կերպարների միջև: Նշելով վերջիններիս ընդհանրությունները, Օրբելին միաժամանակ ընդգծում է նաև նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, բացահայտում այդ առանձնահատկությունների սլատճառ հասարակական-տնտեսական հանգամանքները: Այսպես, օրինակ, խոսելով Դեմետրեի, Երդայի և սասունցի սլառավի նման կերպարների միջև

¹ Հովսեփ Օրբելի. Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 107—108:

² Նույն տեղում, էջ 112:

գոյություն ունեցող տարրերությունների մասին, Օրբելին դա բացատրում է այն հանգամանքով, որ երկրագործական Հունաստանը և անասնապահական Սասունը, որն աննշան չափով էր կերակրվում պրիմիտիվ հացարույսով՝ կորեկով, պետք է, որ իրենց պանթեոններում էապես տարբեր տեղ տային բերքի հովանավոր աստվածուհուն: Նույն կերպ բացատրվում է նաև Անթեյի և Սանասարի միջական կերպարների միջև եղած տարրերությունը: Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյն իր ուժն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի զորության աղբյուրը ջուրն է:

Տարբեր ժողովուրդների առասպելա-փիպական ստեղծագործությունների մեջ եղած նմանություններն ու ընդհանրությունները հիմնականում բացատրելով նրանց հասարակական-տնտեսական պայմանների նմանությամբ ու ընդհանրությամբ, Օրբելին տվյալ հարցում չի բացասում նաև փոխազդեցության գործոնի որոշ դերը: Նրա կարծիքով առասպելների ու փիպերգությունների զարգացման և դանազան ցեղերի ու ժողովուրդների միջև սկսված հաղորդակցության ընթացքում այս կամ այն կողմին հատուկ կերպարներն ու մտապատկերները կարող էին փոխադարձաբար ազդել միմյանց վրա, միմյանց վրա շերտավորվելով բարդանալ: Իրրև նման շերտավորման ու բարդացման օրինակ նա հիշում է այն պատժի տեսակը, որին դատապարտվում է Պրոմեթևսը, պատիժ, որ աշխարհագրորեն կապված է Կովկասի հետ և կրում է Ամիրանի, Ամրանի, Արրսկիլի ու այլ տիտանների մասին կովկասյան ժողովուրդների հյուսած առասպելների հետքերը: Դրա հետ միասին Օրբելին նշում է, որ այս շերտավորումները ոչ մի հիմք չեն տալիս Պրոմեթևսի կերպարը հիմնական գծերով կախման մեջ դնել կովկասյան փիպերգություններից, որովհետև մահվան հանգամանքը կամ մահապատժի ձևը չի կարող հիմք համարվել այս կամ այն հերոսի կամ հսկայի կերպարի և տիպի համար:

«Սասունցի Դավթի» և մյուս ժողովուրդների էպիկական զրույցների վերաբերյալ Օրբելու կատարած հետազոտությունների, նրա զարմանալի ընդգրկում և շառավիղ ունեցող գիտական էքսկուրսների մեջ բացառիկ ցայտունությամբ երևան է եկել անվանի գիտնականի մեծ էրուդիցիան, նրա բաղմակողմանի ու խորը ծանոթությունները տարբեր ժողովուրդների ավանդական բանահյուսության ու կուլտուրայի բնագավառում, նրա ունեցած մեթոդոլոգիական ճիշտ դիրքավորումը:

Օրբելու՝ էպոսին նվիրված աշխատությունների մեջ քիչ չեն այլ կարգի ուշադրավ դիտողություններ ևս: «Սասունցի Դավթի» որոշ վարիանտներում պահպանված մի շարք իդիոմատիկ արտահայտությունների, վերապրուկային մոտիվների ու մոմենտների հնարամիտ բացատրությունների ու համոզիչ մեկնարանումների միջոցով, գիտնականը կարողանում է ետ տանել հին Հայաստանում գոյություն ունեցող վաղեմի սոցիալական ինստիտուտների վրա իջած դարերի վաղազույրը: Այսպես, օրինակ, խոսելուով «Սասունցի Դավթի» մեջ մի շարք անգամներ հիշատակվող «Սասնա տուն» և Փոքր Մհերի համար գործածված «Սասնա տան վերջին խոյը» արտահայտությունների մասին, Օրբելին դրանք համարում է՝ Հայաստանի լեռնային շրջանների տնտեսաձևի վերաբերյալ վեպի թանկագին վկայություններից և այդ առթիվ տալիս է իր շափաղանց

հետաքրքիր բացատրությունը: Հենվելով Քովմա Արծրունու մի վկայության վրա, որի համաձայն խուժեցի լեռնականների «տոհմական տները» գտնվել են իրարից բավական հեռու, Օրբելին «Սասնա տուն» արտահայտության տակ հասկանում է դեռ ֆեոդալական կյանքի հունը չմտած և կլանի տարրերը պահպանող սոցիալ-տնտեսական մի միավոր, իսկ «Սասնա տան խոյ» արտահայտությունը համարում է տան տոտեմի, տոհմի հովանավոր տոտեմի հիշողությունը: Մի ուրիշ անգամ, անդրադառնալով էպոսի կանացի կերպարներից Դեղձուն-Ծամին և Իսմիլ-խաթունին, Օրբելին վերջիններիս մեջ դիտում է մայր-իշխանության արձագանքները, նկատի ունենալով առաջինի ամենքից բարձր կանգնած՝ տան տիրուհի, տան մեծ մայր, բայց ոչ երբեք թագուհի լինելու հանգամանքը, իսկ երկրորդի՝ ինքն իրեն համար կենակից ընտրելու փաստը: Այսօրինակ մնացուկներ ու արձագանքներ են, ըստ Օրբելու, էպոսի մեջ մեթեորային երկաթի օգտագործման պատմությունը, Քեռի թորոսի ու նրա որդիների՝ նահապետական կարգերն ու տոհմական ընտանիքն արտացոլող նկարագրությունը և նման մի շարք ուրիշ դրվագներ:

«Սասունցի Դավիթը» Օրբելու համար սիրելի ու հարազատ թեմա է մնում նաև վեպի հոբելյանից հետո: Անվանի գիտնականը հետագա տարիներին էլ տարբեր առիթներով անդրադառնում է հայկական էպոսին:

Հիշատակելի են հատկապես պատերազմի ժամանակ Սովետական Բանակի զորամասերում՝ հրամկազմի, զինվորների ու նավաստիների համար նրա կարգացած ոգեշունչ դասախոսությունները «Սասունցի Դավիթ» մասին, որոնց մեջ Օրբելին շեշտը դնելով էպոսի ազատասիրական, հերոսական ու հայրենասիրական մոտիվների վրա, Դավիթի ու Մհերի օրինակներով՝ հայրենապաշտության արդար պատերազմի էր կոչում սովետական ռազմիկներին գերմանական զավթիչների դեմ:

«Սասունցի Դավիթ» մասին Օրբելին գրել և ղեկուցումներ է կարդացել նաև պատերազմից հետո: Այսպես, 1955 թ. հայկական էպոսի շինարեն թարգմանության համար շինացի ընկերների խնդրանքով Օրբելին ուղարկում է համապատասխան մի առաջաբան: 1956 թ. ձմռանը Լենինգրադի համալսարանում՝ ուսանողների ու դասախոսների բազմամարդ լսարանի առաջ նա հանդես է գալիս ընդարձակ ղեկուցումով «Սասունցի Դավիթ» մասին: Նույն տարին Հայկական Ակադեմիայի հրատարակչությունը՝ ռուսերեն և հայերեն լեզուներով լույս է ընծայում Օրբելու դիրքը «Հայկական հերոսական էպոսը» վերնագրով, որտեղ ի մի են բերված և վերամշակված են՝ «Սասունցի Դավիթ» համահավաք խմբագրության նրեանի հայերեն ու ռուսերեն և Լենինգրադի ռուսերեն հրատարակչությունների համար հեղինակի գրած ընդարձակ առաջաբան-հետադոտությունները, ինչպես նաև էպոսի հոբելյանական պլենումում և Միութենական Գիտությունների ակադեմիայի հատուկ նիստում Օրբելու կարդացած ղեկուցումները:

Հայկական էպոսին նվիրված Օրբելու հետազոտությունների մեջ ցայտուն ձևով երևան են եկել անվանի գիտնականի բնորոշ առանձնահատկությունները:

Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ Օրբելին հանդես է գալիս իրրե մեծ Լրուդիցիայով օժտված, ըստ ամենայնի ինքնուրույն և ստեղծագոր-

ծական թոխք ու թափ ունեցող մտքի տեր գիտնական։ Նա չի հարասում ուրիշներին, այլ առաջադրում է սեփական կարծիքներն ու եզրահանգումները, որոնք մեր միջնադարյան հիանալի մանրանկարների նման գրավում են իրենց չկրկնվող թարմությամբ ու երանգներով։

Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ, Օրբելին իր հետազոտությունների առարկայի հետ կապված խնդիրները չի սահմանափակում ազգային շրջանակներով։ Նա «Սասունցի Դավիթը» համարձակորեն դուրս է բերում միջազգային թատերաբեմ և դնելով այն համաշխարհային էպոսների հետ մի նժարի վրա, ընդգծում է նրա մեծ արժեքը։

Ինչպես Օրբելու հայագիտական մյուս աշխատությունները, այնպես էլ «Սասունցի Դավիթին» նվիրված նրա հետազոտությունները, սկզբից մինչև վերջ, տոգորված են հարազատ ժողովրդի կուլտուրան անկաշառ սիրող և այն խորապես գնահատող մեծ գիտնականի հայրենասիրական վարակիչ պաթոսով։

Շատերն են ղբադվել «Սասունցի Դավիթ» էպոսով։ Գարելի է թվել բազմաթիվ անուններ, որոնք շնորհակալ մեծ գործ են կատարել վեպի համար հայտնաբերելով, գրի առնելով ու հրատարակելով նրա առանձին պատումները։ Քիչ չեն և այն բանասերները, գիտնականներն ու գրողները, որոնք գրքեր, առաջաբաններ ու հոդվածներ են գրել վեպի մասին, ձգտել են ցույց տալ նրա մեջ թաքնված գանձերը, ուսումնասիրել նրա այս կամ այն կողմը։

Սակայն այդ շատերի մեջ առանձնանում են երեք հոգի, երեք մեծ երախտավորներ, որոնց կատարած դերը պատմական արժեք ունի։

Առաջինը Գարեգին Սրվանձտյանն էր, որ գիտություն համար հայտնագործեց «Սասունցի Դավիթը»՝ 1873 թվականին գրի առնելով և 1874 թվականին հրատարակելով նրա առաջին վարիանտը։ Երկրորդը Մանուկ Աբեղյանն է՝ «Սասունցի Դավիթին» նվիրված ամենաընդարձակ ու ամենահմտալից ուսումնասիրությունների բազմավաստակ հեղինակը հայ իրականության մեջ։ Երրորդ երախտավորը Հովսեփ Օրբելին է, որը բանիվ և գրչով տարածեց «Սասունցի Դավիթի» համբավը Սովետական լայնատարած երկրի բազմազգ ժողովուրդների մեջ, գիտական նոր խոսք ասաց վեպի մասին և մեծապես նպաստեց հայկական էպոսի՝ մարդկության ստեղծած լավագույն էպիկական ստեղծագործությունների շարքում իր արժանի տեղը գրավելու կարևոր գործին։